

Երթալու, և անտի հոս գալու : Առ սոնց ամենն ալ ընկերութիւն մ' են, ու մէկ գլուխ մ' ունին Պ. Ատամա անունով, որուն յորդորմամբն ու քաջալերութեամբը այս տեղերս եկած են : Յիշեալ պատուաւոր ու հարուստ անձը, անցեալ տարի ուխտի եկաւ, սուրբ տեղիքը և Պաղեստինի մեծ մասը պտղացաւ, այն ատեն իւր այս գիտաւորութիւն յայտնեց : Կը յուսամ, ու կը խնդրեմ յԱռառուծոյ, որ ասոնց միջոցաւ այս երկիրները բարեկարգուին ու յառաջանան :

“ Ամսոյս 23/11 ին Պէրութի Պաղվոյ ընդհանուր հիւպատոսը ընտանեօք յատուկ շոգենաւով մը Պէրութէն եկաւ, ու նոյն օրը Ոչմէկ գընաց, սուրբ Երուսաղէմ ուխտի երթալու դիտաւորութիւն . բայց նոյն գիշերը Պէրութէն հեռագիր մը ընդհանուր հիւպատոսը ետ կոշեց, որ պարտաւորեցաւ Ոչմէկն վերադառնալ և հետեւեալ օրը նոյն շոգենաւով Պէրութ երթալ . պատճառը ըստոյգ կերպիւ մը չայստնուեցաւ :

“ Եաեւ ամսոյս 29/17 ին, Ամերիկայի Ծայդոնտէռուկա ֆրգամսնը հասաւ Լ. Պօլսէն, որուն պաշտօնատարները Երուսաղէմ ուխտի ելան . վերադառնալուն Վիրիտ երթալու են . . .”

“ Առատ անձրեւ ունիք այսօր ”.

Քաղաքիս վսեմափայլ կառավարիչ Իզզէթ փաշան, որ քանի մը ժամանակէ ի վեր Պաղայի կողմերը կը գտնուէր արաբացւոց ոմանց մէջ ծագած խուօթութիւնը հանդարտեցը նելու համար, անցեալ ամսոյ 18 ին դարձաւ Երուսաղէմ :

— Ծայդագիրս և թէ շրջակայ

գիւղօրէից առողջական վիճակը՝ գուհութիւն Աստուծոյ լաւ է : Աեպտեմբերի 21 ին առաջին անգամ անձը եւելով, որ կլիմայիս նկատմամբ սովորականէն գրեթէ ամսս մի յառաջէ, սկսաւ օդն ալ զովանալ և առաւել մաքրութիւն :

— Աղեքսանդրից կողմերը քոլերայի գէպք պատահելով, ինչպէս սեպտեմբեր ամսոյ 23 ին հեռագրաւուրը հազորդած էր հոս, հետեւապէս այն կողմէն Յոպակէ եկող շոգենաւերը տասը օր քարանթին պիսի պահեն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋՔ

Երդումն յաւելեալ յօրէնս՝ ցուցանէ նոյն իսկ զանիրաւութիւն օրինին :

Լաւ է անսալ բարեշնորհ ողոքանաց կամակոր մտօք, քան առ հարկի զիջանել բռնութեան :

Եորանոր կանոնադրութիւնք հակառակ ոգւոյ և բարուց ժողովը դեան, առաւել վնասակարք են քան օգտակարք :

Օրէնք որ չեն հիմնեալ ի վերացարդարութեան և հաւասարութեան, են առաւել պատիժ ծանրացեալ ի վերայ մաաց և սրտի ժողովրդեան, և խափանարար յառաջադիմութեան նորա :

Համամութիւն բաղմութեան յօդտակար ձեռնարկութիւնս, ունի զզօրութիւն օրինաց :

ՎՐԻՊԱԿ

Աեպտեմբեր ամսոյ Ոիօնի 140 երես, 2 էջ, 27 տող ի՞նի՞ո՞ւ-ի՞նի՞ո՞ւ, փոխարինութիւնը կարդալու է :